

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ ՄՆԱՑԱԿԱՆԻ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ
ՀԱՇՎԱՌՄԱՍԲ

ԺԳ. 00. 01 – «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝ մանկ. գիտ. դոկտոր Հ. Հ. Պետրոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկ. գիտ. դոկտոր Ա. Վ. Աբրահամյան

մանկ. գիտ. թեկնածու Ա. Ս. Ալեքսանյան

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015թ. հունիսի 5-ին, ժամը 14⁰⁰ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի մանկավարժության 065 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52^ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015թ. մայիսի 4-ին:

Մանկավարժության 065 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝



Ա. Փ. Ղազարյան

ՄՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը

Աշխատաշուկայի ուսումնասիրության արդյունքների վերլուծությունը, բնակչության զբաղվածության պարբերական դիտարկումը էապես կարևորվում է աշխատաշուկայում պահանջարկ և մեծ վարկանիշ ունեցող որակյալ մասնագետների պատրաստման հարցում: Հիմնախնդիրն այսօրինակ մոտեցմամբ են դիտարկվում գրեթե բոլոր երկրներում՝ հաշվի առնելով երկրի և կրթության համակարգի զարգացման միտումներն ու տեմպերը, կրթության բովանդակության արդիականացման ու ուսուցման գործընթացում ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտությունը, ինչպես նաև՝ կրթության համակարգի բարեփոխումների մի շարք առանձնահատկություններ:

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) հետագա բնականոն զարգացման ռազմավարության առաջնահերթությունը պայմանավորված է գիտելիքահենք տնտեսությամբ, որի կայուն զարգացման համար անհրաժեշտ է լուծել աշխատաշուկայի պահանջներին բավարարող բարձրորակ և մրցունակ մասնագետների պատրաստման հիմնախնդիրը:

Արդի պայմաններում թույլ է մասնագիտական ուսումնական հաստատությունների (ՄՈՒՀ) և գործատուների կապը: Հաճախ գործատուները չեն կարողանում հստակ ձևակերպել մասնագետներին անհրաժեշտ որակական բնութագրերը, հաճախ էլ դրանք անտեսվում են ՄՈՒՀ-ի կողմից: Արդյունքում, ՄՈՒՀ-ի թողարկած մասնագետները մասնագիտական անհրաժեշտ որակների բացակայության պատճառով պահանջված չեն աշխատաշուկայում: Հիշյալ հակասության պատճառով ծագում են մասնագետներին աշխատաշուկայի կողմից ներկայացվող պահանջների ուսումնասիրության արդյունքներով պայմանավորված ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերի բովանդակության՝ ըստ էության բարեփոխումների, մասնագետներին ներկայացվող պահանջները կրթական ծրագրերում արտահայտելու մանկավարժական հիմունքների և գործընթացի կազմակերպական-մանկավարժական մոդելի մշակման անհրաժեշտություն: Այդ գործընթացը ենթադրում է աշխատաշուկայի հստակ պահանջներին համապատասխան ըստ մասնագիտական կրթության մակարդակների և մասնագիտությունների կրթական վերջնարդյունքների ձևակերպում, որի հիմքում պետք է դրվեն մասնագիտությունների գործառնային վերլուծության արդյունքները, աշխատաշուկայի կողմից մասնագիտական կրթության տվյալ մակարդակին ներկայացվող պահանջների համալիրը և անձի կրթական պահանջմունքները:

Մասնագետների պատրաստման և մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) կատարելագործման հիմնախնդիրը մշտապես հետաքրքրություն է ներկայացրել տնտեսագետների, մանկավարժ գիտնականների շրջանում: Մասնագիտական կրթության ոլորտում ապագա մասնագետների պատրաստման գործընթացի վերոնշյալ հիմնախնդիրները հետազոտողների ուշադրության կենտրոնում են մասնագիտական կրթության զարգացման արդյունավետ ուղիների որոնման, նոր ռազմավարությունների մշակման, հասարակության զարգացման միտումներին համապատասխանեցնելու տեսանկյուններից:

Այդ տեսանկյունները մասնավորապես արտացոլվել են հետազոտողներ Վ.Ի. Բայդենկոյի, Ի.Ա. Զիմնայայի, Մ.Բ. Կլարինի, Ի.Ս. Յակիմանսկայայի, Ս.Ի. Արխանգելսկիու, Է.Վ. Բալակիրևայի, Ռ.Ու. Բոգդանովայի, Գ.Կ. Սելեվկոյի, Օ.Վ. Դաուտովայի, Կ.Շոբերի, Ռ.Հոյակ-Ֆլիգելի, Թ.Շեմանի, Ս. Բլանկեի, Յ.Ռոթի, Յ.Շմիդթի, Շ.Կլաուսի, Մ.Կլեինի, Հ.Ռյոհրսի և այլոց ուսումնասիրություններում: Նշված հետազոտություններում փաստվում են, որ ժամանակակից պայմաններում մասնագիտական կրթության տարբեր մակարդակների մասնագիտությունների կրթական ծրագրերի և ուսումնական պլանների մշակման գործընթացում գրեթե հաշվի չեն առնվել կրթության բովանդակության արդիականացմանն ընձեռնվող հնարավորությունը, ուսուցման արդյունավետ տեխնոլոգիաների մշակ-

ման անհրաժեշտությունը, աշխատաշուկայի և գործատուների պահանջների հաշվառման հիմնահարցերը:

Ժամանակակից պահանջներին համապատասխան մասնագիտական կրթության իրականացման խնդիրները դիտարկվել են մանկավարժահոգեբանական հետազոտություններում: Մասնագետների պատրաստման խնդիրներին նվիրված հետազոտություններում էապես կարևորվում են Ա.Ս. Բատալովի, Մ.Ա. Բարաննիկի, Ու.Գ. Զիննուրովի, Ա.Պ. Պանկրուխինի, Վ.Պ. Շչեպինինի, Մ.Մ. Վոլկովայի, Ա.Ն. Կոչետովի, Հ.Հ Պետրոսյանի, Ռ.Մերկի, Գ.Վիգների և այլոց հետազոտությունները:

Հետազոտվող հիմնախնդրի շրջանակներում բացահայտվել են հետևյալ էական հակասությունները՝

- մասնագիտական կրթության համակարգում ուսանողների մասնագիտական պատրաստության գործընթացում ձևավորվող աշխատանքային կոմպետենտությունների և աշխատաշուկայի, գործատուների կողմից ներկայացվող պահանջների միջև,
- ՄԿԾ-ի մշակման, կատարելագործման մանկավարժական տրամաբանության և այդ մշակումների իրականացման գործընթացների միջև,
- ՄԿԾ-ի արդիականացման գործընթացում ժամանակի հրամայականի և կատարելագործման աշխատանքի ցածր արդյունավետության միջև:

Այդ հակասություններով, դրանց գործնական բացառիկ կարևորությամբ և անհետաձգելի լուծմամբ է պայմանավորված սույն հետազոտության թեմայի արդիականությունը և հրատապությունը:

Հետազոտության նպատակը մասնագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման հիմնական և լրացուցիչ ՄԿԾ-ի կատարելագործման գործընթացների գիտամանկավարժական հիմունքների մշակումն է աշխատաշուկայի և գործատուի պահանջների հաշվառմամբ:

Հետազոտության օբյեկտը մասնագիտական և շարունակական կրթության համակարգն է:

Հետազոտության առարկան հիմնական և լրացուցիչ ՄԿԾ-ի կատարելագործման գործընթացն է:

Գիտական վարկածը պայմանավորված է այն ենթադրությամբ, որ կստեղծվեն մասնագիտական կրթության ժամանակակից պահանջներին համապատասխան մասնագիտական կրթության համակարգի զարգացման և թողարկվող մասնագետների որակական պահանջներն աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու, ինչպես նաև՝ տեսական և գործնական անհրաժեշտ պայմաններ, եթե՝

- հետազոտվի զարգացած երկրների կրթական ծրագրերի մշակման ու կատարելագործման գործընթացում աշխատաշուկայի պահանջների հաշվառման փորձը և ներդրվի՝ հաշվի առնելով ՀՀ աշխատաշուկայի պահանջները,
- համեմատական վերլուծության արդյունքներով բացահայտվեն ՀՀ կրթության շուկայի զարգացման միտումները և դրանց վրա ունեցած կրթական ծրագրերի կատարելագործման ազդեցությունը,
- հետազոտվեն և ներդրվեն տեղական ու միջազգային աշխատաշուկաների՝ մասնագետներին ներկայացվող պահանջների համակարգը և դրանք կրթության ոլորտ տեղափոխելու մանկավարժական ուղիներն ու մեխանիզմները,
- ՄԿԾ-ի կատարելագործման հիմքում դրվեն կրթության բովանդակության արդիականացման սկզբունքներն ու կոմպետենտախեն մոտեցումը,

- մշակվեն և ներդրվեն կրթական ծրագրերի կատարելագործման գործընթացում անձի կրթական պահանջմունքների, պետության, հասարակության և աշխատաշուկայի պահանջների հաշվառման մանկավարժական պայմանները:

Հետազոտության խնդիրները

1. ուսումնասիրել տնտեսապես զարգացած երկրների ՄՈՒՀ-ում մասնագիտական կրթության կրթական ծրագրերի մշակման, ներդրման և կատարելագործման գործընթացում աշխատաշուկայի պահանջների հաշվառման փորձը,
2. ուսումնասիրել ՀՀ աշխատաշուկայի քաղաքականությունը և պարզել մասնագետների առաջարկն ու պահանջարկը որակական տեսանկյունից,
3. վերլուծել ՄԿԾ-ի մշակման ժամանակակից հայեցակարգային հիմնական դրույթները և գիտականորեն հիմնավորել գործատուների և աշխատաշուկայի պահանջների՝ մասնագիտական կրթական ծրագրերում ներառելու անհրաժեշտությունը,
4. բացահայտել և վերլուծաբար դիտարկել ՄԿԾ-ի ձևավորման ու կատարելագործման առանձնահատկությունները ՀՀ-ում,
5. մշակել ՄԿԾ-ի արդիականացման և կատարելագործման գործընթացներում պետության պահանջներով արտահայտված հասարակության կարիքների և աշխատաշուկայի պահանջների, ինչպես նաև՝ անձի կրթական պահանջմունքների հաշվառման մանկավարժական հիմունքներն ու գործընթացի կազմակերպական-մանկավարժական մոդելը:

Ատենախոսության գիտական նորույթը այն է, որ փորձ է արվում ներկայացնել ՄԿԾ-ի մշակման գիտամանկավարժական հիմունքները, մասնագետների պատրաստման գործընթացի ժամանակակից համակարգը իրական և արդյունավետ դարձնող մանկավարժական տեսական և գործնական հիմունքները, զբաղվածության մասնագիտություններին համապատասխան ՄԿԾ-ի մշակման գործընթացի մանկավարժահոգեբանական վերլուծությունը և այն արդյունավետ դարձնելու մանկավարժահոգեբանական պայմանները, կրթական ծրագրերի բարեփոխումների գործընթացում անձի կրթական պահանջմունքների, պետության պահանջներով արտահայտված հասարակության կարիքների և աշխատաշուկայի պահանջների հաշվառման մանկավարժական հիմունքներն ու գործընթացի կազմակերպական-մանկավարժական մոդելը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը

Աշխատանքի մեթոդաբանական հիմք են հանդիսացել են հանդիսացել մասնագիտական կրթության ոլորտում մասնագետների պատրաստման գործընթացի արդիականացման հիմնախնդիրների վերաբերյալ հիմնարար հետազոտությունները (Ա. Ռուլֆ, Բ.Բերգմանն, Դ.Հարթունգ, Ռ.Նույթման, Ու.Թայլեր, Ֆ.Դեկեր, Վ.Յեսերիխ, Ֆ.Յ. Կայգեր, Գ.Պետցոլդ, Ֆ.Նեսթման, Ու.Ջիկենդիկ, Ֆ. Էնգել, Հ. Հորթչ, Ո. Յեզերիխ, Ս.Կերպեն, Հ.Ռյորս, Վ.Ի. Բոյդենկո, Ի.Ա. Ջիմնայա, Մ.Բ. Կլարին, Ի.Ս. Յակիմանսկայա, Հ.Հ. Պետրոսյան և այլք), մասնագիտական կրթության զարգացման արդյունավետ միտումների որոնման, հասարակության զարգացմանը համապատասխան նոր ռազմավարությունների մշակման տեսական մոտեցումները (Հ. Ռյորս, Կ. Շիրսման, Ս.Բլանկե, Կ.Ռոթհ, Յ.Շմիդթ, Ի.Շթրիցկե, Ռ.Հոյակ-Ֆլիեգել, Թ.Շարման, Ի.Իսան, Վ.Ա. Սլաստենինա, Ա. Սիշենկո, Ե. Պոլատ, Մ. Բուխարկինա, Մ. Մախեսևա, Ա. Պետրով և այլք), կրթության ոլորտի մարքեթինգին և շուկայագիտությանը նվիրված հետազոտությունները (Ա.Ս. Բատալով, Մ.Ա. Բարաննիկ, Ա.Պ. Պանկրովիչ, Ու.Գ.Ջիննուրով, Ֆ.Կոտլեր, Վ.Պ. Շչետկին, Մ.Մ. Վոլկովա, Ռ. Մերկ, Գ. Վիզներ և այլք), մասնագետների պատրաստման խնդիրներին նվիրված հիմնարար հետազոտությունները (Մ.Վ. Կլարին, Վ.Ի. Բայդենկո, Ս.Ի. Արխանգելսկի, Ի.Ս. Յակիման-

սկայա Ի.Ա. Զիննյայա, Գ.Կ.Սելևկո, Ա.Պ. Բելյանա, Վ.Վ. Դավիդով, Լ.Ս. Վիգոտսկի, Ա.Ն.Լեոնտև, Պ.Յա. Գալպերին, Ն.Ֆ. Տալիգինա, և այլք):

Պաշտպանության և ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Աշխատաշուկայի և կրթական ծառայությունների շուկայի փոխկապակցվածությունն արտահայտվում է փոխներգործությամբ, որը կարելի է ապահովել մասնագիտական կրթական չափորոշիչներում մասնագիտական կոմպետենցիաների արտացոլմամբ, կրթության բովանդակության պարբերական արդիականացմամբ և կատարելագործմամբ:
2. Մոցիալական գործընկերությունը շահագրգիռ և պատասխանատու գերատեսչությունների միջև ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական կրթության չափորոշիչների ստեղծման, հետևաբար նաև՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակյալ և մրցունակ մասնագետների թողարկման պարտադիր պայման է:
3. Առաջարկի և պահանջարկի հիման վրա ձևավորված և իրականացվող կրթության քաղաքականությունը, մասնագիտական կրթության բովանդակության պարբերական արդիականացումն աշխատաշուկայի պահանջների հաշվառմամբ կարող է ապահովել արդի հասարակության և պետության զարգացումը և դառնալ ՄՈՒՀ-ի երիտասարդ սերնդի դաստիարակության և մասնագետների ձևավորման բնականոն պայման:
4. Մասնագիտական որակավորման առանցքային կոմպետենցիաները մասնագիտական կրթական ծրագրեր և չափորոշիչներ մշակող կառույցների համար պետք է դառնան առաջանցիկ ուղենիշ և արտահայտվեն մասնագիտական կրթության վերջնարդյունքներում: Թողարկվող մասնագետների մասնագիտական որակավորման առանցքային կոմպետենցիաները գործատուների և աշխատաշուկայի պահանջների համապատասխանության որոշիչ բնութագրերն են:
5. Մասնագիտական կրթությունն առանց շարունակական կրթության և մասնագիտական զարգացման չի կարող ապահովել մասնագիտական աշխատանքային գործունեության ոլորտում ակնկալվող հաջողությունները և աշխատաշուկայում պահանջված լինելը: Հիմնախնդրի լուծման էական պայման է մասնագիտական զարգացման գործընթացի կազմակերպումն անդրագոգիկայի սկզբունքների հիման վրա՝ կատարելագործված ու արդիականացված լրացուցիչ կրթական ծրագրերով մասնագետների շարունակական վերապատրաստումների և որակավորման բարձրացման միջոցով:
6. Կրթական ծրագրերի արդիականացման և կատարելագործման գործընթացներում պետության պահանջներով արտահայտված հասարակության կարիքների և աշխատաշուկայի պահանջների, ինչպես նաև՝ անձի կրթական պահանջունքների հաշվառման մեր կողմից մշակված մանկավարժական հիմունքների ու գործընթացի կազմակերպական-մանկավարժական մոդելի արդյունավետությունը հիմնավորված է գործնական փորձարկմամբ:

Հետազոտության տեսական նշանակությունը: Ստացված տվյալները և դրանց հիման վրա կատարված եզրակացությունները և առաջարկությունները կարող են կրթական ծրագրերի ստեղծման ժամանակակից մոդելի և չափորոշիչների մշակման ու կիրառման նորովի մոտեցման տեսական հիմք դառնալ: Աշխատանքում առկա տեսական դատողությունները կրթական ծառայություններ իրականացնողների համար կարող են օգտակար լինել «կրթություն՝ առաջարկին» առավել մարքեթինգային մոտեցում դրսևորելու, իսկ սպառողներին՝ սեփական ակնկալիքները և պահանջունքները հստակեցնելու հարցում: Այն կարող է օգտակար լինել նաև մասնագիտական կողմնորոշման կառույցներին՝ անհրաժեշտ տեսական գիտելիքներ ձեռք բերելու գործընթացում:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կապահովեն ներդաշնակություն աշխատաշուկայի կողմից մասնագետներին ներկայացվող պահանջների և ՄՈՒՀ-ի կրթական գործունեության արդյունքում թողարկված մասնագետների որակի միջև: Հետազոտության արդյունքների ներդրումն ուսուցման գործընթաց կնպաստի թողարկվող մասնագետներին մասնագիտական ինքնաիրացման հատկանիշով օժտելուն, ինչպես նաև՝ առաջարկվող մոտեցմամբ առաջնորդվող ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերի իրականացման աշխատանքի արդյունքն աշխատաշուկայում կլինի երիտասարդների դյուրին կողմնորոշվելը, աշխատողների համար՝ մասնագիտական վերապատրաստման և որակավորման անհրաժեշտության գիտակցումը:

Աշխատանքը կարող է արժեքավոր նյութ դառնալ համապատասխան թեմաներով հետաքրքրվող ուսանողության համար, դասախոսների և մասնագիտական կողմնորոշման կառույցների աշխատակիցներին կօգնի դրսևորել նորովի մոտեցում իրենց առօրյա աշխատանքում, ինչպես նաև՝ երիտասարդ սերնդի մասնագիտական կողմնորոշման ու մասնագետների մասնագիտական վերապատրաստման գործընթացներում:

Հետազոտության մեթոդները: Ատենախոսության հիմնախնդրի լուծման նպատակով հետազոտության ընթացքում կիրառվել են մի շարք **տեսական և գործնական մեթոդներ՝**

1. տեսական հետազոտության մեթոդներ՝ մանկավարժահոգեբանական հետազոտությունների, գիտական գրականության, համացանցային աղբյուրների, վերլուծության, համադրման և ընդհանրացման մեթոդներ,
2. փորձարարական հետազոտության մեթոդներ՝ մանկավարժական դիտում, անկետավորում, թեստավորում, հարցազրույց, համեմատության և նմանադրության, ընդհանրացման, արդյունքների վերլուծության մաթեմատիկական և վիճակագրական:

Հետազոտության արդյունքների հիմնավորվածությունն ու հավաստիությունն ապահովված է հետազոտվող հիմնախնդիրների վերաբերյալ հոգեբանամանկավարժական գիտական գրականության վերլուծությամբ, հետազոտության արդյունքներով, մեթոդաբանական հիմքերի, մեթոդների, հետազոտությունների վարկածի, նպատակի, առաջադրված խնդիրների փորձնական ստուգման հիման վրա ձեռք բերված հիմնավորվածությամբ, հետազոտության տրամաբանական կառուցվածքով, եզրակացությունների և հիմնական դրույթների հիմնավորմամբ: Հետազոտության փորձաքննությունն իրականացվել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի նիստում, գիտափորձի բազա հանդիսացած ՄՈՒՀ-ում, կազմակերպություններում: Հարցումներ են կատարվել Երևանի պետական հումանիտար քոլեջում, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական ծառայությունում, ՀՀ գործատուների և արտադրողների պետական միությունում, ՀՀ կրթության և գիտության նախարարությունում, Եվրոպական ուսումնական հիմնադրամի (ETF) հայաստանյան գրասենյակում, Գերմանիայի բարձրագույն կրթության ազգային ինստիտուտի միջազգային համագործակցության կառույցում, «Արիալ» լրացուցիչ կրթության մասնավոր ծառայությունում, ինչպես նաև՝ արտադրող գործատուների և այլոց հետ:

Հետազոտության իրականացման փուլերը

Հետազոտությունները կատարվել են 2009–2014թթ. երեք փուլերով.

- առաջին՝ նախապատրաստական փուլում (2009–2010թթ.) ձևավորվել է հիմնական հասկացությունների կառույցը, իրականացվել տեղեկույթի հավաքագրում, դասակարգում, փիլիսոփայական, մանկավարժական, հոգեբանական մի շարք տեսությունների վերլուծություն, ուսումնասիրվել է հիմնահարցի առկա արտասահմանյան փորձը, մշակվել հետազոտությունների մեթոդաբանական հիմքերը, հավաքագրվել հետազո-

տության առարկայի փորձնական նկարագրման փաստերը, բացահայտվել ոլորտում առկա հակասությունները, ձևակերպվել հետազոտության թեման:

- Երկրորդ՝ նախագծման, իրականացման և ներդրման փուլում (2010-2012թթ.) իրականացվել է թողարկվող մասնագետներին ներկայացվող պահանջների հաշվառում, հետազոտությամբ բացահայտված հակասությունների լուծման ուղիների մշակում: Բացահայտվել են ուսումնասիրության և գիտական վերլուծության ենթակա առավել հրատապ և արդիական խնդիրները:
- Երրորդ՝ ընդհանրացնող փուլում (2012-2014թթ.) կատարվել է հետազոտության տեսական մեթոդաբանական հիմքի ճշգրտում, փորձնական նյութի համակարգում, վերլուծում և ընդհանրացում, անց են կացվել հարցազրույցներ և հարցումներ դասախոսների, գործատուների և ուսանողության շրջանում, իրականացվել է դրանց արդյունքների վերլուծություն, մշակված դրույթների ներդրման արդյունքների հիման վրա ձևակերպվել են և ներկայացվել առաջարկություններ, շարադրվել են աստենախոսությունն ու եզրակացությունները:

Հետազոտության արդյունքները և եզրակացությունները

Հետազոտության ընթացքի և արդյունքների մասին զեկուցվել է Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հիմնադրման 90-ամյակին նվիրված գիտաժողովում, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնում: ՄԿԾ-ի արդիականացման և կատարելագործման կազմակերպական-մանկավարժական մոդելը փորձարկվել է Երևանի պետական հումանիտար քոլեջում: Կատարված հետազոտական աշխատանքների արդյունքները հրատարակվել են «Մանկավարժական միտք», «Մխիթար Գոշ», «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» գիտական հանդեսներում, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի հիմնադրման 90-ամյակին նվիրված գիտաժողովի, Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական և գիտամեթոդական հոդվածների ժողովածուներում: Աստենախոսության թեմայի վերաբերյալ հրապարակված է 6 հոդված:

Աստենախոսության կառուցվածքը և ծավալը

Աստենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Աստենախոսության ընդհանուր ծավալը 147 էջ է: Աշխատանքը պարունակում է 35 գծապատկեր, 12 աղյուսակ, 2 նկար, 2 հավելված, գրականության ցանկը՝ 112 սկզբնաղբյուրներ և աշխատություններ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ ներկայացված են հետազոտության արդիականությունը, օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, վարկածը, մեթոդաբանական հիմքը, մեթոդները, հետազոտության փուլերը, ստացված արդյունքների և եզրակացությունների հիմնավորվածությունն ու հավաստիությունը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները:

Աստենախոսության առաջին՝ «Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմունքները» խորագրով գլուխի առաջին՝ «Մասնագիտական կրթության և զբաղվածության փոխներգործության վերաբերյալ հայեցակարգային մոտեցումների վերլուծությունը» ենթագլխում դիտարկված է մասնագիտական կրթության և աշխատաշուկայի փոխներգործության մեթոդաբանական հիմնավորումները: Ներկայացվում է կրթության քաղաքականության ու աշխատաշուկայի քաղաքականության ուսումնասիրության և դրանց ներդաշնակ զարգացման կարևորությունը: Աշխատանքային կոմպետենտությունը բնութագրում է անհատի գործունեությունը հիմնված մասնագիտության տեսական և

գործնական հիմնարար իմացության վրա: Սակայն դեռևս ամենակարևոր հարցը մնում է չպարզաբանված: Ինչպե՞ս պետք է իրականացվի մասնագիտական կրթությունը, որպեսզի այն զբաղվածության համար դառնա կարևոր նախապայման: Գերմանացի մանկավարժ Հերման Ռյորսի կարծիքով, մասնագիտություն ասելով պետք է հասկանալ աշխատանք, կրթություն ասելով՝ անձի զարգացման բնութագիր, իմանալն ու կարողանալը՝ հնարավոր ապրելակերպի վրա հիմնված էթիկական վերաբերմունք:

Երկրորդ՝ **«Մասնագիտական կրթության շարունակականությունը, որպես աշխատաշուկայի պահանջների բավարարման միջոց»** ենթազվիում կարևորվում է յուրաքանչյուր անհատի ամբողջ կյանքի ընթացքում ուսումնառելու և զարգանալու անհրաժեշտությունը, հիմնավորելով մեծահասակների կրթության գործընթացում անսրագոգիկ սկզբունքների կիրառման անհրաժեշտությունը: Ամբողջ կյանքի ընթացքում ուսումնառությունը տարանջատում և անհատականացնում է որակավորման պրոֆիլները, իսկ զբաղվածության համար անհրաժեշտ նախապայման լինելուց բացի այն մարդուն տալիս է լրացուցիչ ինքնավստահություն, պատասխանատվություն և մասնակցություն հասարակական կյանքին և հասարակության ձևավորման գործընթացում:

Երրորդ՝ **«Կրթական ծառայությունների մարքեթինգը ժամանակակից մտածողությանը համապատասխան»** ենթազվիում դիտարկված է կրթության ոլորտի մարքեթինգի և մենեջմենթի մեթոդաբանական մոտեցումներն ու դրանց կիրառման կարևորությունը, շարունակական կրթության որակի զարգացման, շարունակական կրթության բնագավառում մենեջմենթի անհրաժեշտության հարցերը, մանկավարժական կազմի առջև դրված խնդիրներն ու մեծահասակների կրթական գործընթացի առանձնահատկությունները:

ՀՀ-ի անցումը շուկայական հարաբերությունների պայմանավորեց այն փաստը, որ պետության կողմից վճարվող կամ «անվճար» կրթությունը վերածվեց ապրանքի՝ ծառայության: Կրթության շուկայի ազատականացումը հանգեցրեց նրան, որ առաջարկը սկսեց գերազանցել պահանջարկին: ՄՈՒՀ-ի կրթական գործունեության ուսումնասիրությունը փաստեց, որ շուկայական հարաբերությունների պայմաններում հաստատության գործունեության արդյունավետության գրավականը գործունեության կառավարման մարքեթինգային մոտեցումն է: Շուկայական հարաբերությունների անցնելուց հետո ՀՀ-ում սկսեց ձևավորվել կրթական ծառայությունների շուկան: Եվ չնայած կրթական ծառայությունների շուկան առաջարկում է տարբեր մակարդակների հիմնական և լրացուցիչ մասնագիտական կրթություն, այդուամենայնիվ գնալով ընդլայնվեց բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում առաջարկվող կրթական ծառայությունների շրջանակները:

Չորրորդ՝ **«Առանցքային հմտությունները՝ մասնագիտական որակավորման համար նախատեսված կրթական ծրագրերի կատարելագործման ուղենիշ»** ենթազվիում դիտարկված են կրթական ծրագրերի կատարելագործման հիմնախնդիրը մասնագիտական որակավորման համար էական համարվող առանցքային հմտությունների ենթատեքստում:

Առանցքային հմտությունները մասնագիտական որակավորման համար դիտվում են որպես ամենակարևոր բաղադրիչ, իսկ որակավորումը իմացության, կոմպետենտության, վերաբերմունքի և արժեհամակարգի ամբողջություն, որն անպայմանորեն պետք է դրսևորվի անհատի մասնագիտական գործունեության ժամանակ: Առանցքային հմտությունների ձևավորվածության պատշաճ մակարդակի ցուցանիշը անհատի աշխատունակությունն է, որը նրան օգնում է ոչ միայն լուծել մասնագիտական ինքնիրացման հարցը, այլև լինել աշխատաշուկայից առավել անկախ:

Այսօր ցանկացած աշխատատեղի նկարագիրը պահանջում է մասնագիտական գործունեության որակներ, ինչպես նաև՝ ճկունություն, խմբային աշխատանքի կարո-

դություն: Առանցքային հմտությունը ապահովում է աշխատողի կողմից հանկարծահաս տարբեր իրավիճակներում ճկունության դրսևորում:

Մասնագիտական գրականության վերլուծության արդյունքներով ենթազլխում ներկայացված է նաև առանցքային հմտությունների բաղադրատարրերը, աշխատանքային հմտության առարկայական, մեթոդական, սոցիալական բաղադրիչները:

Ատենախոսության երկրորդ՝ «Մասնագիտական կրթության և աշխատաշուկայի փոխազդեցության առանձնահատկությունների վերլուծությունը ՀՀ-ում» խորագրով գլխի առաջին՝ «ՀՀ-ում տնտեսության կառուցվածքի փոփոխությունների պատճառով մասնագիտական կրթական ծրագրերի կատարելագործման հիմնախնդիրները» ենթազլխում ներկայացված է վերջին տարիներին մասնագիտական գրականության մեջ հասարակության ինտելեկտուալ ներուժի վերաբերյալ քննարկումների արդյունքները:

Աշխատաշուկայի և կրթության ոլորտի կապի անհրաժեշտության հարցում շեշտադրվում է աշխատաշուկայի վերլուծության կարևորությունը կրթության քաղաքականության մշակման ու իրականացման և մասնագիտական որակավորումների շնորհման բովանդակային միասնականության հարցում: Այդ ուղղությամբ գործունեության արդյունքում բացահայտվեց ՄԿԾ-ի կատարելագործման անհրաժեշտությունը:

Խորհրդային Միության փլուզումից հետո առաջացած գործազրկությունը բացատրվում էր քաղաքական լարվածությամբ և շուկայական հարաբերությունների անցմամբ: Այժմ շուկայական հարաբերությունների պայմաններում գործազրկության մի զգալի մասը պայմանավորված է տնտեսության տարբեր ճյուղերում առկա իրարամերժ հանգամանքով, երբ առկա է կոնկրետ աշխատուժի պահանջարկ և նույն մասնագիտությամբ մասնագետների գործազրկություն, փաստ, որը մատնանշում է ՄՈՒՀ-ի կողմից թողարկվող մասնագետների որակավորումների անհամապատասխանությունը աշխատաշուկայի և գործատուների պահանջներին, միաժամանակ, հիմնավորում ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերի կատարելագործման և արդիականացման անհրաժեշտությունը:

Երկրորդ գլխի **«ՀՀ-ում կրթության շուկայի զարգացման միտումները և դրանից բխող մասնագիտական կրթական ծրագրերի համապատասխանեցման անհրաժեշտությունը»** ենթազլխում վերլուծված են թեմային առնչվող ոլորտում առկա սոցիոլոգիական ուսումնասիրությունները: ԱՊՀ պետություններում, այդ թվում նաև՝ ՀՀ-ում, անցումային ժամանակաշրջանում որակյալ աշխատուժը կա՛մ դուրս է մղվել արտադրությունից կա՛մ մասնակիորեն արտագաղթել է, որի արդյունքում զբաղված աշխատուժի կազմում ավելացել է միջին և ցածր որակավորման աշխատուժի տեսակարար կշիռը: Այդ երևույթի բացասական հետևանքներից է վերջին տարիներին նկատվող բարձրորակ աշխատուժի, հատկապես բարձր որակավորում ունեցող բանվորների պակասը, որը պետք է լրացվի արհեստագործական և միջին մասնագիտական կրթական համակարգի վերականգնման և զարգացման միջոցով, գործընթացում ըստ էության ապահովվելով դրանց կրթական ծրագրերի համապատասխանեցումը գիտատեխնիկական առաջընթացին և տնտեսության առաջանցիկ զարգացման հեռանկարին համահունչ աշխատաշուկայի ու գործատուների պահանջներին:

Ատենախոսության երրորդ՝ «Կրթական ծրագրերի կատարելագործումը հարցազրույցների և սոցիոլոգիական հարցումների վերլուծության արդյունքում» գլխի առաջին՝ «ՀՀ աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագիտական և լրացուցիչ կրթության ոլորտում առկա խնդիրների բացահայտումը հարցազրույցների միջոցով» ենթազլխում համադրվում են ոլորտում իրականացված ուսումնասիրության վերլուծության արդյունքները: ՀՀ աշխատաշուկայում մասնագետների պահանջարկի ուսումնասիրությունը փաստեց վերլուծությունների արդյունքների հակասական լինելը, որը

մեր կողմից հստակեցվեց տարբեր կազմակերպություններում մասնագետների հետ հարցազրույցների միջոցով:

Հարց՝ *Ինչու՞վ բացատրվում է ՀՀ աշխատաշուկայում կոնկրետ մասնագետների առաջարկի և պահանջարկի անհամապատասխանությունը:*

Հարցը ուղղվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական ծառայության, Հայաստանի գործատուների հանրապետական միության /ՀԳՀՄ/, ՀՀ կրթության և գիտության նախարարության պատասխանատու մասնագետներին:

Հարցազրույցներից պարզվեց, որ վիճակագրական տվյալները, պատասխանատու գերատեսչությունների տեղեկատվությունը, կարծիքներն իրարամերժ են, սակայն գործազուրկ մասնագետների վերապատրաստման և վերաորակավորման արդյունքում կարելի է մեղմել գործազրկությունը: Կրկնվող էր այն կարծիքը, որ աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագետները լքել են երկիրը, իսկ առկա գործազուրկ մասնագետները չեն համապատասխանում գործատուի պահանջներին:

Հարց

1. *«Ինչու՞ մեր երկրում դաստիարակության համար այդքան կարևոր համարվող անձնային հատկանիշները չեն դրսևորվում աշխատանքային հարաբերություններում»:*
2. *«Ինչու՞ գործատուի կողմից չի կարևորվում մասնագիտական աշխատանքային փորձը»:*

Հարցը ուղղվել է Կահույքի արտադրության գործարանի, այլումինե դոնորի և պատուհանների արտադրության գործարանի պատասխանատու մասնագետներին:

ՀՀ-ում մասնագետների որակավորումից գործատուների սպասելիքները չեն արդարացվում և այդ իսկ պատճառով նրանց համար կարևորվում է աշխատողի անձնային հատկանիշները, քանի որ աշխատողը կարող է հմտանալ աշխատանքային գործունեության մեջ ժամանակի ընթացքում, իսկ անձնային հատկանիշները պետք է լինեն ձևավորված մինչև մուտքը աշխատաշուկա: Փաստորեն աշխատաշուկայում հայտնված մասնագետների մոտ բացակայում են *առանցքային հմտությունների սոցիալական և անձնային բաղադրիչները:*

Տրամաբանական հաջորդ քայլը ՀՀ աշխատաշուկայում արհեստագործական և միջին մասնագիտական որակավորմամբ մասնագետների պակասի և դրա պատճառների վերլուծությունն էր: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ աշխատաշուկայում առկա են աշխատատեղեր, որոնց համար անհրաժեշտ են արհեստագործական և միջին մասնագիտական կրթությամբ մասնագետներ, բայց զբաղված են բարձրագույն կրթություն ունեցող անձանց կողմից:

Հարց՝ *Ինչու՞վ է բացատրվում գործատուի կողմից համալսարանական և բուհական կրթություն ունեցող շրջանավարտներին տրվող նախապատվությունը:*

Հարցը ուղղվել է Կահույքի արտադրության գործարանի, այլումինե դոնորի և պատուհանների արտադրության գործարանի, Եվրոպական ուսումնական հիմնադրամի (ETF) հայաստանյան գրասենյակի պատասխանատու մասնագետներին:

Հարցազրույցի արդյունքում պարզվեց, որ մասնագիտական կրթությունը կարող է զբաղվածության համար անկարևոր լինել ինչպես բարձրագույն, այնպես էլ արհեստագործական և միջին մասնագիտական կրթության դեպքում: Սակայն որքան բարձր է կրթության մակարդակը, այնքան ավելի հեշտ է դառնում աշխատաշուկայում զբաղված լինելը: Իսկ արհեստագործական և միջին մասնագիտական կրթությամբ մասնագիտությունների դեպքում կարևոր դեր է խաղում հասարակության մեջ առկա կարծրատիպը և բացասական մոտեցումը կրթության այդ մակարդակի նկատմամբ:

Երկրորդ՝ «ՀՀ բնակչության լրացուցիչ կրթության պահանջումները հարցազրույցների միջոցով ուսումնասիրության վերլուծությունն ու արդյունքները» ենթագլխում ուսումնասիրվել է երիտասարդ գործազուրկների լրացուցիչ կրթական ծրագրերով կրթության պահանջումները, արդյունքում բացահայտվել է նրանց ճնշող մեծամասնության մոտ պահանջումների բացակայության պատճառները:

Աղյուսակ 1. Լրացուցիչ կրթության պահանջումների բացակայության պատճառները

Աշխատանք գտնելու համար կարևոր չէ	20,4%
Բացակայում են ֆինանսական հնարավորությունները	56,3%
Չգիտեմ որտեղ կարող եմ այդ ստանալ	12,7%
Չգիտեմ ինչ կրթության պահանջարկ կա աշխատաշուկայում	7,9%
Այլ պատճառներ	2,5%
Ընդհանուր	100%

Պատճառների էության բացահայտման համար իրականացվեցին հարցազրույցներ:

Հարց՝ Ինչու՞ հնարավոր չէ առավել արդյունավետ համագործակցություն պետական զբաղվածության ծառայության և գործատուների միջև:

Հարցն ուղղվել է Գերմանիայի բարձրագույն կրթության ազգային ինստիտուտի միջազգային համագործակցության կառույցի (IIZ/DVV), «Արիալ» լրացուցիչ կրթության» մասնավոր ծառայության, ՀՀ գործատուների հանրապետական միության պատասխանատու մասնագետներին:

Հարցազրույցի արդյունքում պարզվեց, որ լրացուցիչ կրթական ծառայությունները դիտվում են անհատի կրթական պահանջումներին բավարարման միջոց և առաջարկները հիմնված չեն աշխատաշուկայի պահանջարկի վրա: Ինչպես զբաղվածության գործակալությունները, այնպես էլ կրթության ծառայություն իրականացնողները չունեն բավարար գիտելիքներ կրթական ծառայությունների մարքեթինգի և հասարակայնության հետ աշխատանքի բնագավառներում: Միաժամանակ, անբավարար է լրացուցիչ կրթություն իրականացնողների և գործատուների հետ համագործակցությունը:

Երրորդ՝ «Մասնագիտական կրթական չափորոշիչների և զբաղվածության չափորոշիչների ներդաշնակումը ուսումնական պլանների վերլուծության արդյունքներով» ենթագլխում, հաշվի առնելով այն, որ աշխատաշուկայի պահանջների և մասնագիտական կրթության ոլորտի թողարկած մասնագետների մասնագիտական որակների էական անհամապատասխանություն առկա է միջին մասնագիտական կրթության բնագավառում, հետազոտության բազա ընտրվեց Երևանի պետական հումանիտար քոլեջը:

Մեր կողմից ուսումնասիրվել են քոլեջի 0210-«Թարգմանություն և սպասարկման կազմակերպում», 0207-«Թարգմանություն և գործավարություն» և 0208-«Թարգմանություն և մաքսավարություն» մասնագիտությունների ուսումնական պլանները և բացահայտվել առկա թերությունները.

1. Եռալեզու գործնական թարգմանություն առարկայի համար տրված է 108 ժամ, որը բավարար չէ հայերեն և երկու օտար լեզուներով անհրաժեշտ հմտություններ ձեռք բերելու, թարգմանություններ կատարելու մասնագիտական կոմպետենցիաների ձևավորման համար: Բավարար չէ նաև ավագ կուրսերում եռալեզու թարգմանության համար հիմք հանդիսացող օտար լեզվի ուսուցման համար նախատեսված ժամերի քանակը (252 ժամ յուրաքանչյուր կիսամյակ):
2. Արձանագրված երկրորդ լուրջ թերությունը որոշ «պարտադիր» առարկաների առկայությունն է բոլոր մասնագիտությունների ուսումնական պլաններում: Մասնա-

վորապես, նույն 0207-«Թարգմանություն և մաքսավարություն» և 0210-«Թարգմանություն, սպասարկման կազմակերպում» մասնագիտությունների համար որպես այդպիսին՝ նախատեսված «Հայոց լեզու և խոսքի մշակույթ»-ը (72 ժամ), ուսումնական պլաններում 288 ժամաքանակով «Հայոց լեզվի» առկայության պարագայում:

3. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բազայի վրա ուսումնական պլաններում 54 ժամով «պատմություն» առարկայի պարտադիր լինելն է, ինչը միանգամայն ընդունելի է հիմնական ընդհանուր կրթության բազայի պարագայում:
4. Միանգամայն անընդունելի է 54 ժամ ծավալով «Տնտեսագիտության հիմունքներ» առարկայի պարտադիր լինելն այն պարագայում, երբ օրինակ՝ 0210-«Թարգմանություն և սպասարկման կազմակերպում» և 0208-«Թարգմանություն և մաքսավարություն» մասնագիտությունների ուսումնական պլաններում ներառված են «Ընդհանուր տնտեսագիտություն» և «Մասնագիտական ոլորտի տնտեսագիտության հիմունքներ» մոդուլները 72 ժամով: Բնականաբար, կարելի է ենթադրել, որ հաշվի չի առնվել օտար լեզվի դասաժամերի փոխարեն ոչ մասնագիտական առարկայի դասավանդման աննպատակահարմարությունը:
5. 0210-«Թարգմանություն և սպասարկման կազմակերպում» մասնագիտության համար նախատեսված ուսումնական պլանում 54 ժամ հատկացված է «Ղեկավարման հոգեբանություն և էթիկա» մոդուլին, սակայն, մեր կարծիքով այն բոլորովին տեղին չէ և բովանդակային առումով մասնագիտությանը չի առնչվում:

Ելնելով հետազոտության արդյունքներից, մասնագիտական կրթական և զբաղվածության չափորոշիչների ներդաշնակման հիմնախնդիրը արդի մասնագիտական կրթության հրամայականն է: Զբաղվածության մասնագիտական չափորոշիչներն ուղղված են անձի պրոֆեսիոնալիզմի ապահովմանը, ուստի մասնագիտական կրթական չափորոշիչների հիմքում պետք է դրվեն որոշակի մասնագիտական գործառույթների կատարման արդյունավետություն ապահովող առանցքային որակավորումները, մասնագետի հոգեբանական որակների, ընդունակությունների, գիտելիքների, կարողությունների, հմտությունների զարգացման համալիր գործունեությունը:


Չորրորդ և հինգերորդ ենթազուխներում ներկայացված է մասնագիտական կրթությունից բավարարվածության վերաբերյալ նախնական սոցիոլոգիական հարցումների վերլուծությունը, մեր կողմից մշակված կրթական ծրագրի կատարելագործման կազմակերպական-մանկավարժական մոդելը, մոդելի կիրառման միջոցով կատարելագործված ուսումնական պլաններով ուսուցման վերաբերյալ կրկնակի հարցման արդյունքներն ու հետադարձ կապը: Մոդելի մշակման հիմքում դրված են աշխատաշուկայի և գործատուների կողմից թողարկվող մասնագետներին ներկայացվող պահանջները կրթության ոլորտում ներդնելու վերաբերյալ հետազոտության արդյունքները:

Սոցիոլոգիական հարցմանը մասնակից են դարձվել 150 ուսանող և 45 դասախոս: Նախնական հարցման արդյունքներից ստացված պատկերը հետևյալն էր.

ուսանողներ՝

- ուսումնական հաստատությունը իր ծառայությունների իրականացման վերաբերյալ բավարար մարքեթինգային աշխատանքներ չի կատարում,
- ուսանողները վստահ չեն աշխատանքային գործունեության մեջ,
- ուսումնական գործընթացում կարևորում են պրակտիկային հատկացվող ժամերի թիվը,
- ուսանողները կրթվելու ավելի մեծ ներուժ ունեն, քան կարող է առաջարկել ուսումնական հաստատությունը:

Նկար 1. Կրթական ծրագրի կատարելագործման կազմակերպական-մանկավարժական մոդելը





Դասախոսներ՝

- մասնագիտական կրթության առանցքային հմտությունների վերաբերյալ դասախոսները չունեն հստակ և ամբողջական պատկերացում,
- աշխատաշուկայի և կրթական քաղաքականության փոխկապակցվածության մասին գիտելիքների ձեռքբերման կարիք ունի միջին մասնագիտական կրթության ոլորտի դասախոսների զգալի մասը:

Երևանի պետական հումանիտար քոլեջում ուսումնական պլանների արդիականացման գործընթացում ներդրվել է մեր կողմից մշակված կրթական ծրագրի կատարելագործման կազմակերպական-մանկավարժական մոդելը, կատարելագործվել ուսումնական պլանները: Մոդելի արդյունավետության գնահատման նպատակով իրականացվել է կրկնակի հարցում: Արդյունքում արձանագրվել է դրական տոկոսային աճ:

Ուսանողներ Գծապատկեր 1




«Ո՞վ է Ձեզ կողմնորոշել մասնագիտական ընտրության հարցում» հարցին նախնական հարցման ժամանակ արձանագրված՝ գովազդի միջոցով ընտրություն կատարած ուսանողների 3%-ը կրկնակի հարցման ժամանակ փոխարինվել է 9%-ով, իսկ պատահաբար տեղեկացված լինելու 17%-ը՝ փոխարինվել է 19%-ով: Ենթադրվում է, որ պատահաբար տեղեկացված լինելը նույնպես կարող էր գովազդի արդյունք լինել:

Գծապատկեր 2




«Միրում էք Ձեր սովորած մասնագիտությունը» նախնական հարցման արդյունքում նշված հարցի պատասխաններն արդեն գոհացնող էին, կրկնակի հարցման արդյունքում գրանցվեց դրական պատասխանի ևս 5% աճ:

Գծապատկեր 3



«Ուսման տարիներին ստացած գիտելիքները բավարար են Ձեզ աշխատանքային գործունեության համար» հարցի կրկնակի հարցումը ցույց է տալիս ապագա ուսանողների մասնագիտական ինքնավստահության աճը 6%-ով:

Գծապատկեր 4




Քննարկելով 4-րդ գծապատկերը, «ուսումնառությունից հետո ինչ՞ով էք մտադիր զբաղվել», հարկ է նշել, որ համաձայն հասարակության և վերլուծաբանների այն կարծիքին, որ միջին մասնագիտական կրթությունը յուրօրինակ կամուրջ է բարձրագույն կրթություն ստանալու համար, թերևս մոտ է իրականությանը, քանի որ միջին մասնագիտական կրթությունից հետո սովորել շարունակել ցանկացողները կազմում են ընդհանուր հարցվածների 34%-ը: Սակայն կրկնակի հարցումն էլ ավելի բարձր ցուցանիշ

արձանագրեց «աշխատելու եմ» պատասխանի դեպքում, ինչի հաշվին նվազեց «չգիտեմ» պատասխանողների թիվը:


Գծապատկեր 5. Դասախոսներ

Ուսումնական գործընթացում մանկավարժի որակներից որո՞նք եք առավել կարևորում (նախնական) (վերջնական)



45 դասախոսներին տրված «Ուսումնական գործընթացում մանկավարժի որակներից որո՞նք եք առավել կարևորում» հարցի պատասխաններից կարելի է ենթադրել, որ նրանք չունեն հստակ և ամբողջական պատկերացում ուսումնական գործընթացում մասնագետի համար կարևոր համարվող մասնագիտական առանցքային հմտությունների ձևավորման վերաբերյալ: Կրկնակի հարցման պարագայում բացահայտվեց, որ աճել է մանկավարժական կազմի անձնային, մասնագիտական և մանկավարժական որակների համալիրի անհրաժեշտության կարևորության գիտակցումը՝ 31%-44%, իսկ այդ աճի հաշվին նվազել է զուտ մասնագիտական որակի կարևորությունը: Հետևաբար, դասավանդող անձնակազմի համար նկատելի է դարձել, որ միայն մասնագիտական որակը բավարար պայման չէ մանկավարժական գործունեության համար:

Գծապատկեր 6




Չնայած դասախոսները չունեն լիարժեք պատկերացում կրթական չափորոշիչներում առանցքային հմտությունների արտացոլման մասին, այդուհանդերձ նրանց մեծամասնությունը գտնում է, որ կրթական չափորոշիչներում մասնագետի անձնային և մասնագիտական որակներն արտացոլված են մասամբ: Հետևաբար, դասախոսներն ունեն վերապատրաստման կարիք: Եվ չնայած կրթության ազգային ինստիտուտի կողմից դասախոսների համար պարբերաբար կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ, այդուհանդերձ դրանց բովանդակությունը չի պարունակում մասնագիտական կրթության առանցքային հմտությունների մասին տեղեկատվություն:

Այս հարցի պատասխաններում դրական դինամիկա հնարավոր չէր ավելի երկար ժամանակահատված պահանջվելու առումով: Սակայն քուլեջի կառավարման խորհրդի անդամներն իրենց աշխատանքային ծրագրում, ոլորտի բարեփոխման և պարբերաբար մշտադիտարկման հաշվետվության մեջ գրանցել են այն խնդիրները, որոնք ունեն լրացուցիչ

մշակման և փոփոխության կարիք: Մասնավորապես, դասախոսների կողմից առանցքային հմտությունների կարևորության գիտակցումը: Կրկնակի հարցման արդյունքում առանցքային հմտությունների կարևորության գիտակցումը արձանագրվել է բացառապես բոլոր հարցվողների մոտ: Այդ է վկայում առաջին և երկրորդ հարցումների պատասխաններում հարցին չպատասխանողների տոկոսային տարբերությունը, որն է՝ 14%-0%:

Գծապատկեր 7



Ուրախակի է այն հանգամանքը, որ դասախոսների 58%-ը դրական է գնահատում աշխատաշուկայի պահանջարկի ազդեցությունը մասնագիտական կրթության առաջարկի վրա: Դա փաստում է դասախոսների, որպես կրթական ծառայություն իրականացնողների, ժամանակակից մոտեցման մասին: Հարցվածների 29%-ը դժվարացել է գնահատել մասնագիտական կրթության առաջարկի վրա աշխատաշուկայի պահանջարկի փոխադարձ կապը: Սա նույնպես փաստում է դասախոսների սակավ տեղեկացված լինելը և նրանց կողմից ժամանակի պահանջին անհամապատասխան մասնագիտական կրթական ծառայություն իրականացնելու մասին: Հարցի ուսումնասիրությունը հաստատեց այն ենթադրությունը, որ միջին մասնագիտական կրթության ոլորտի դասախոսների զգալի մասը կարիք ունի աշխատաշուկայի և կրթական քաղաքականության փոխակապակցվածության մասին գիտելիքների ձեռքբերման:

Այսպիսով, հետազոտության արդյունքների մաթեմատիկական և վիճակագրական վերլուծությունը փաստում է աշխատանքային վարկածի հավաստիությունը և գիտական հիմնավորվածությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիտական մանկավարժական, մասնագիտական գրականության վերլուծությունը, տեսական, հետազոտության և փորձարարական աշխատանքի արդյունքները ցույց տվեցին, որ կրթական ծրագրերի մշակման գործընթացում գործատուների և աշխատաշուկայի պահանջների հաշվառման առկա մոտեցումները լիարժեք չեն, հաշվի չեն առնվում Հայաստանի կրթության համակարգի և տեղական աշխատաշուկայի առանձնահատկությունները, միջազգային աշխատաշուկայի անընդհատ փոփոխվող պահանջները, վերջին տասնամյակում կրթական ծրագրերի բարեփոխումների արդյունքները, մասնագիտական կրթական չափորոշիչների մշակման միջազգային փորձը: Կրթական ծառայություն իրականացնող ՄՈՒՀ-ը ՄԿԾ-ի կատարելագործումը պետք է իրականացնեն աշխատաշուկայի պահանջների և այդ ոլորտում զարգացած երկրների կրթական ծրագրերի մշակման ու կատարելագործման գործընթացում աշխատաշուկայի պահանջների հաշվառման փորձի հաշվառմամբ: Ուստի՝

1. մասնագետների առաջարկի և պահանջարկի հիմնախնդիրը պայմանավորված է աշխատաշուկայի և կրթական ծառայությունների շուկայի փոխկապակցվածությամբ և փոխներգործությամբ, որը կարելի է ապահովել՝
 - թողարկվող մասնագետների մոտ աշխատանքային մասնագիտական կոմպետենցիաների ձևավորումը և զարգացումը ՄՈՒՀ-ի գործունեության գերակա ռազմավարական խնդիր դիտելու և կրթական ծրագրերը կոմպետենտահեն մոտեցումներով կառուցելու,
 - մասնագիտական առանցքային հմտությունները մասնագիտական կրթական չափորոշիչների կրթական վերջնարդյունքում արտացոլելու,
 - կրթության բովանդակության պարբերական արդիականացման և կատարելագործման միջոցով,
 - ուսումնական պլանները բեռնաթափելու և հատուկ մասնագիտական առարկաների մոդուլների ու պրակտիկայի բովանդակային ամբողջության ապահովման միջոցով:
2. Մասնագիտական որակավորման առանցքային կոմպետենցիաները թողարկվող մասնագետների՝ գործատուների և աշխատաշուկայի պահանջների համապատասխանության որոշիչ բնութագրերն են, հետևաբար՝ թողարկվող մասնագետների մոտ դրանց ձևավորման և զարգացման գործընթացները պետք է դառնան ՄՈՒՀ-ի կրթական գործունեության և կրթական ծրագրերի արդիականացման առաջանցիկ ուղենիշ: Այս մոտեցման և առաջարկի ու պահանջարկի հիման վրա ձևավորված և իրականացվող կրթության քաղաքականությունը, մասնագիտական կրթության բովանդակության պարբերական արդիականացումն աշխատաշուկայի պահանջների հաշվառմամբ կարող է ապահովել արդի հասարակության և պետության զարգացումը և դառնալ ՄՈՒՀ-մ երիտասարդ սերնդի դաստիարակության և որակյալ ու մրցունակ մասնագետների թողարկման պարտադիր պայման:
3. Առանցքային կոմպետենտությունները նաև ժամանակակից մասնագետի էական բնութագրերն են և պետք է կազմեն բոլոր մակարդակների մասնագիտական կրթության պետական չափորոշիչների պահանջների անբաժանելի բաղադրատարր: Մասնագետների պատրաստման գործընթացում ձևավորվող կոմպետենցիաները՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխանության աստիճանը, գրեթե չի մշտադիտարկվում և բացահայտում: Ուստի, այդ պահանջները պետք է դրվեն դրանց ձևավորման, ինչպես նաև՝ գործընթացի վերահսկողության նախագծային, իրականացման և գնահատման հիմքում:
4. Յուրաքանչյուր դասախոս պետք է լուծի ոչ միայն կոնկրետ առարկայի գիտելիքների, կարողությունների և հմտությունների համակարգի, այլ նաև դրանց հիման վրա առանցքային կոմպետենցիաների ձևավորման խնդիրը: Չնայած առանցքային կոմպետենտությունների զգալի մասը ճշգրիտ չափման ենթակա չէ, այդուամենայնիվ, մասնագետի կայացման համար ունի ավելի կարևոր և խորքային նշանակություն:
5. Աշխատաշուկայի և ՄՈՒՀ-ի գործունեության ներդաշնակման, մասնագետներին ներկայացվող պահանջների բավարարման, ինչպես նաև՝ ՄՈՒՀ-ի կողմից թողարկվող մասնագետների ինքնաիրացման կոմպետենտությունների ձևավորման գործընթացի արդյունավետ կառավարման հիմքը գիտատեխնիկական առաջընթացին համապատասխան չափորոշիչների և այն կազմակերպության առկայությունն է, որը կապահովի կրթության, գիտության, տեխնիկայի, տեխնոլոգիայի առաջնային ուղղությունների զարգացման միասնական պետական քաղաքականության իրականացումը:
6. Շարունակական կրթության արդիականացումը ենթադրում է շարունակական կրթության բովանդակության, գիտամեթոդական և կազմակերպչական բարեփոխում, առա-

ջարկվող ծրագրերի իրականացման անդրագրգիկ մոդելի կիրառում, լրացուցիչ կրթության որակի ապահովման մանկավարժական մեխանիզմների և կառավարման առկայություն: Նման պայմանների ապահովմամբ հնարավոր կլինի իրականացնել լրացուցիչ շարունակական կրթության գերակա խնդիրը, որն արդի դինամիկ զարգացող հասարակության մեջ մարդուն ակտիվ ստեղծագործական կյանքին անհրաժեշտ գիտելիքներով և հմտություններով օժտելն է, մարդու՝ որպես աշխատողի, քաղաքացու, անհատականության մշտապես կատարելագործվելու հնարավորությամբ ապահովելը:

7. Մասնագիտական կրթությունն առանց շարունակական կրթության և մասնագիտական զարգացման չի կարող ապահովել մասնագիտական աշխատանքային գործունեության ոլորտում հաջողությունները և աշխատաշուկայում պահանջված լինելը: Հիմնախնդրի լուծման էական պայման է մասնագիտական զարգացման գործընթացի կազմակերպումն անդրագրգիկայի սկզբունքների հիման վրա՝ կատարելագործված ու արդիականացված լրացուցիչ կրթական ծրագրերով մասնագետների շարունակական վերապատրաստումների և որակավորման բարձրացման միջոցով:
8. Համեմատական վերլուծության արդյունքներով բացահայտվել են ՀՀ կրթության շուկայի զարգացման միտումները և դրանց վրա կրթական ծրագրերի կատարելագործման ազդեցությունը: Կրթական ծրագրերի արդիականացման և կատարելագործման գործընթացներում պետության պահանջներով արտահայտված հասարակության կարիքների և աշխատաշուկայի պահանջների, անձի կրթական պահանջմունքների հաշվառման մեր կողմից մշակված կրթական ծրագրի կատարելագործման ու գործընթացի կազմակերպական-մանկավարժական մոդելի արդյունավետությունը հիմնավորվել է գործնական փորձարկմամբ:
9. Հետազոտության ողջ ընթացքը սոցիոլոգիական հարցումները և մանկավարժական գիտափորձը ապացուցում են հետազոտության հիմնախնդրի դրվածքի, վարկածի ճշտությունը, ստացված արդյունքների հավաստիությունը:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Մասնագիտական կրթությունը մասնագետների առաջարկի և պահանջարկի ենթատեքստում, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես N1- 3, 2012, էջ 17-21 (հանահեղինակությամբ՝ Պետրոսյան Հ.Հ.):
2. Կրթական ծառայությունների մարքեթինգի մի քանի հարցեր, «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ, գիտական և գիտամեթոդական հոդվածների ժողովածու» N2(4), 2012, էջ 20-24 (հանահեղինակությամբ՝ Պետրոսյան Հ.Հ.):
3. Գործատուների պահանջների հաշվառմամբ մասնագիտական կրթական ծրագրերի բովանդակության կատարելագործման նոր մոտեցում, «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ», N1, 2014, էջ 27-34, (հանահեղինակությամբ՝ Պետրոսյան Հ.Հ.):
4. Նոր մոտեցումներ մասնագիտական կրթությանը, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես N4-6 2012, էջ 45-50:
5. Կրթության շարունակականության որոշ մոտեցումներ, «Մանկավարժական Միտք» հանդես N 1-2, 2012, էջ 83-88:
6. ՀՀ աշխատաշուկայի վերլուծությունը և ուսումնական հաստատությունների առանձնահատկությունները, «Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու», Պրակ 1, 2013, էջ 442-446:

СОВЕРШЕНСТВОВАНИЕ ПРОФЕССИОНАЛЬНЫХ ОБРАЗОВАТЕЛЬНЫХ
ПРОГРАММ С УЧЕТОМ ТРЕБОВАНИЙ РЫНКА ТРУДА

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Анализ исследований рынка труда констатирует факт о том, что существует определенное несоответствие уровня выпускников системы профессионального образования с требованиями рынка труда. Выпускники учреждений системы профессионального образования вследствие отсутствия необходимых качеств не востребованы на рынке труда. В результате возникает необходимость модернизировать образовательные программы профессиональных учебных заведений, предъявлять специалистам четкие требования, отраженных в образовательных стандартах и программах, а также разработать организационно-педагогическую модель педагогического процесса. Этот процесс предполагает сформулировать образовательные результаты по уровню профессионального образования и профессий в соответствии с четкими требованиями рынка труда. В его основе должны быть положены результаты функционального анализа профессий, комплекс требований, предъявляемых с стороны рынка труда к данному уровню профессионального образования и образовательные потребности личности.

Цель исследования. Разработка научно-педагогической модели подготовки, переподготовки, повышения квалификации и усовершенствования дополнительных профессиональных программ, с учетом требований рынка труда и требований работодателей.

Задачи исследования:

1. изучить опыт разработки, внедрения и совершенствования образовательных программ в профессиональных учебных заведениях в экономически развитых странах, в странах СНГ, а также опыт разработки, внедрения и совершенствования данных программ с учетом требований рынка труда;
2. исследовать политику рынка труда в РА и выяснить состояние спроса и предложения специалистов с точки зрения их качественных характеристик;
3. проанализировать современные концептуальные положения разработки образовательных программ и научно обосновать необходимость включения требований работодателей и рынка труда в профессиональные образовательные программы;
4. раскрыть и аналитически рассмотреть особенности формирования и совершенствования профессиональных образовательных программ в РА;
5. Разработать в процессе модернизации и совершенствования профессиональных образовательных программ организационно-педагогическую модель учета образовательных потребностей личности в соответствии с общественными нуждами и требованиям рынка труда..

Научная новизна исследования состоит в том, что представлены научно-педагогические основы разработки профессиональных образовательных программ, педагогические теоретические и практические основания эффективной подготовки специалистов. Проанализирован процесс разработки профессиональных образовательных программ по обеспечению занятости и пути его совершенствования. Разработана организационно-педагогическая модель учета образовательных потребностей личности в соответствии с общественными нуждами и требованиям рынка труда в процессе реформирования образовательных программ.

Теоретическое значение исследования:

Полученные результаты и рекомендации могут лежать в основе современной модели создания образовательных программ и разработки стандартов и их применения.

Основные выводы и доводы исследования могут быть использованы специалистами сферы образовательных услуг, в плане применения маркетингового подхода к предложению

«образование» и уяснения собственных ожиданий и потребностей. Они могут быть использованы также профессионально-ориентационными структурами в процессе приобретения необходимых теоретических знаний.

Практическое значение исследования:

Результаты исследования могут обеспечить гармонию между требованиями, предъявляемым специалистам с стороны рынка труда и их квалификацией, окончивших профессиональные учебные заведения.

Внедренные результаты исследования могут способствовать профессиональной самореализации выпускников. Учебные заведения, которые руководствуются предложенным подходом, могут успешно ориентировать молодых специалистов в результате реализации образовательных программ и способствовать осознанию необходимости профессиональной переподготовки и повышения квалификации.

Работа может стать ценным материалом для студентов, интересующих соответствующими проблемами. Она поможет преподавателям и сотрудникам структур профессионального образования с новых позиций подходить к решению многих проблем в процессе осуществления их профессиональных обязательств, а также молодому поколению в процессе профессиональной ориентации и переподготовке.

Содержание исследования:

Диссертация состоит из введения, 3 глав, заключения, ссылок, приложений.

MARGARI MNATSAK MATEVOSYAN

**IMPROVING VOCATIONAL EDUCATION PROGRAMS TO MEET THE
REQUIREMENTS OF THE LABOR MARKET
SUMMARY**

The relevance of the study. The analysis of labor market research establishes the fact that there is a certain level of inconsistency between the graduates of vocational education with the requirements of the labor market. The graduates of vocational education system due to lack of necessary qualities are not in demand in the labor market. As a result, there is a need to modernize the educational programs of vocational schools, to lay claims clear requirements to professionals reflected in educational standards and programs, and to develop organizational and pedagogical model of the pedagogical process. This process involves formulating educational outcomes in terms of vocational education and professions in accordance with the clear requirements of the labor market. The results of the functional analysis of occupations should lie in the basis, the complex requirements from the labor market to that level of vocational training and educational needs of the individual.

The aim of the research. The research develops the scientific and pedagogical model of training, retraining, advanced training and additional professional improvement programs to meet the requirements of the labor market and the requirements of employers.

Objectives of the study:

1. examine the experience of developing, implementing and improving educational programs in vocational schools in economically developed countries, in the CIS countries, as well as the experience in the development, implementation and improvement of these programs to meet the requirements of the labor market;

2. investigate the labor market policy in Armenia and see the status of supply and demand of specialists in terms of their quality characteristics;

3. analyze the current situation of the conceptual development of educational programs and research to justify the need to include the requirements of employers and the labor market in professional education programs;

4. open and analytically examine the features of formation and improvement of professional educational programs in Armenia;

5. develop the organizational and pedagogical model in the process of modernization and improvement of professional educational programs taking into account education needs of the individual in accordance with social needs and requirements of the labor market.

Scientific novelty of the research lies in the fact that the presented scientific and pedagogical basis for developing the vocational education programs, teaching theoretical and practical foundation of effective training. It analyzes the process of developing vocational training programs for employment and ways to improve it as well as develops the organizational and pedagogical model taking into account the education needs of the individual in accordance with social needs and requirements of the labor market in the process of reforming the educational programs.

The theoretical value of the research:

Findings and recommendations can be the basis of the modern model of developing educational programs and standards and applying them.

The main conclusions of the study and arguments can be used by specialists of educational services, in the application of the marketing approach to the proposal of "education" and clarify their own expectations and needs. They can also be used by professionally oriented structures in the process of acquiring the necessary theoretical knowledge.

The practical significance of the research:

The results can provide harmony between claims laying to specialists and the requirements the labor market, their qualifications, graduated from vocational schools.

The implementation of research results may contribute to professional self-realization of the graduates. The educational institutions, which are governed by the proposed approach can successfully orient young professionals as a result of the implementation of educational programs and promote awareness of the need for professional training and professional development.

The work can be a valuable material for students to interest in relevant issues. It will help the faculty and staff structures of vocational education to approach the solution of many problems in the course of their professional obligations from a new angle, as well as the younger generation in the process of vocational guidance and retraining.

The content of the study:

The thesis consists of an introduction, three chapters, conclusion, references, applications.

